ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ

ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ

Հոդված 4. Արդյունաբերական քաղաքականության իրականացման պետական կարգավորումը

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով արդյունաբերական քաղաքականության մշակումը և իրականացումը հետևյալ հիմնական ուղղություններով.

1) ներդրումային և գործարար միջավայրի բարելավում, ներառյալ՝ փոքր և միջին արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության խրախուսում և աջակցություն.

2) հարկային վարչարարության իրականացման ընթացակարգերի կրճատում.

3) արտահանման և ներմուծման ընթացակարգերի պարզեցում.

4) գերակա ճյուղերում վարկերի մատչելիության և հասանելիության ապահովում, վարկային տեղեկատվության կենտրոնացում.

5) իրավաբանական անձանց սնանկացման և լուծարման ժամկետների կրճատում.

6) ներդրումային և վենչուրային հիմնադրամների ստեղծում.

7) արդյունաբերական գոտիների ստեղծման ընթացակարգերի ներդրում.

8) ֆինանսական օժանդակության ապահովում.

9) վարկային երաշխիքների տրամադրում.

10) կադրերի վերապատրաստման ծրագրերի համաֆինանսավորում.

11) միջազգայնորեն ճանաչված որակի կառավարման համակարգերի ներդրման բնագավառում ֆինանսական և տեխնիկական աջակցության ցուցաբերում.

12) հետազոտությունների և մշակումների իրականացման խթանում.

13) արտաքին ներդրումների ներգրավում.

14) մարզերի մասնագիտացման և ներհանրապետական կոոպերացիաների խթանում.

15) արտաքին շուկաների մատչելիության ապահովում.

16) նորամուծությունների համակողմանի խթանում, տեխնոլոգիաների և գիտելիքի փոխանցմանը աջակցում, գիտություն-արտադրություն կապի ամրապնդում՝ կրճատելով

գիտական մտքի արտադրության մեջ տեղայնացումից մինչև արտադրանքի փորձանմուշի ստեղծման ժամկետը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն հոդվածի 1-ին մասում նշված ուղղությունների մասով՝ հաստատում է պետական օժանդակության և աջակցության ծրագրեր: